

ԳԻՏԱԿԱՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

ՍԻՐԱՐՓԻ ՏԵՐ ՆԵՐՍԵՍՅԱՆ. ԳԼԱՁՈՐԻ ՐԱԲՈՒՆԱՊԵՏ ԵՍԱՅԻ ՆՉԵՑՈՒ ԴԻՍԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ

Անվանի արվեստաբան Սիրարփի Տեր Ներսեսյանի ֆրանսերեն այս հոդվածը լույս է տեսել 1986 թ. Ղայկ Բերբերյանի հիշատակին նվիրված հոդվածների ժողովածուում՝ Les portraits d'Esayi Nč'ec'i, supérieur de Glajor վերնագրով (Armenian Studies in Memoriam Haïg Berbérien, ed. D. Kouymjian, Lisbon, Galouste Gulbenkian Foundation, 1986, pp. 229-241): Թարգմանության ժամանակ հարազատ ենք մնացել բնագրին՝ անհրաժեշտության դեպքում փոփոխություններ անելով միայն հայերեն շարադասության համաձայն: Ղդումներում հայատառ ենք գրել այն ուսումնասիրությունները, որոնք գիտնականը ներկայացրել էր գիտական տառադարձությամբ: Օտարալեզու գրականությունը հղված է նույնությամբ:

ԽԱՉԻԿ ՎԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Բան. գիտ. թեկնածու
Մատենադարան

Ձեռագրի ընդօրինակմանը ժամանակակից մարդկանց տատկերները հաճախ են զարդարում հայկական ձեռագրերը, որոնց տատվիրատուները նախընտրում էին ներկայանալ Քրիստոսին ձեռագիր նվիրելիս, և, ինչդեպ հաճախ է նշվում հիշատակարաններում, ձեռագիրը Տիրոջ առջև մի յուրատեսակ միջնորդ էր հանդիսանում: Այդ տատկերները երբեմն ուղեկցվում էին աստվածային ողորմությունը հայցող աղոթքներով, որոնց տատասխանը գտնում ենք XII դ. մի ձեռագրում, ուր Քրիստոսի կողքին գրված են Եսայի մարգարեի հետևյալ խոսքերը. «Ե՛ս եմ, ե՛ս եմ այն նույնը, որ ջնջում եմ իմ հանդեղ կատարած քո անօրինությունները և քո մեղքերն այլևս չեմ հիշելու» (Եսայի, 43:25)¹:

Երբեմն մանրանկարներում ծաղկողներն ավելացնում էին մաս իրենց ինքնանկարները՝ մասշտաբով ավելի փոքր և մեկուսի, իսկ ընդօրինակվող երկերի հեղինակների տատկերները խիստ հազվադեպ են. նկատի չունենալով շրջանի այնպիսի մանրանկարներ, ինչպիսիք Գրիգոր Նարեկացու կամ Ներսես Շնորհալուն են, որոնք հանդիպում են XVI-XVII դդ. ձեռագրերում, այլ այն մանրանկարները, որոնք արված են որևէ հեղինակի կենդանության օրոք:

Այս տեսանկյունից հատուկ ուշադրության են արժանի Սյունյաց մահանգի մտավոր կենտրոն և ժամանակակիցների կողմից համալսարան կամ նույնիսկ երկրորդ Աթենք անվանված² Գլաձորի վանքի թաթումադետ Եսայի Նչեցու դիմատատկերները, որոնք արդյունք են որոշակի հանգամանքների: Որովեպ գիտնական

և հատկապես ուսուցիչ՝ Եսային բարձր է գնահատվել իր ժամանակակիցների կողմից, եղել է արվեստների հովանավոր, նրա թաքունադասարանական տարիներին (1284-1338 թթ.) մանրանկարչական արվեստն այստեղ մեծ վերելք է առել³:

Կառանձնացնել նախևառաջ երկու մանրանկար, մեկը՝ Նշեցուն ժամանակակից, որ հայտնի է միայն համառոտ նկարագրությամբ, մյուսը՝ հետագայի: Մինչ ավելի ամբողջական մեկ այլ օրինակի անցնելը, ճիշտ կլիներ նախ անդրադառնալ այս երկու մանրանկարներին, քանի որ դրանք հանդիպում են Եսայի Նշեցու կազմած *Քերականության մեկնություն*ն աշխատանքի առաջին էջերին: Դրանցից առաջինը գտնվում էր Մշո Առաքելոց վանքի Շմբե 14 ձեռագրում՝ ընդօրինակված 1311 թ. Ներմոնի վանքում Եսայի Նշեցու հոգեգաղթի Տիրացու նախասարկավազի համար: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին անհետացած այս ձեռագրի⁴ համառոտ նկարագրության համաձայն՝ Եսային պատկերված էր նստած դիրքով՝ հովվական գավազանը ձախ ձեռքին, իսկ աջ ձեռքը մեկնած դեղի ծնկած դիրքով երկու սարկավազները, որոնցից մեկը ձեռքին դառնում էր մի տախտակ՝ «Աստված մեծ է» մակագրությամբ, իսկ նկարի ներքևում գրչի անունը՝ անդիտան Թորոս: Այս *Քերականության մեկնություն*ն վերջի հիշատակարանը կրկնում է նախագաղափար օրինակին, որ 1309 թ. Գլաձորում եղած ժամանակ Եսայի Նշեցու պատվերով ընդօրինակել էր Խաղար մականվանյալ Բջնու արքեպիսկոպոս տեր Գրիգորը⁵: Ուստի՝ հնարավոր է, որ Մուշի գրչագրի մանրանկարը ևս կրկնօրինակված է եղել այդ նախօրինակից:

Նշեցու երկրորդ պատկերը գտնվում է Երուսաղեմի հայոց պատրիարքարանի Շմբե 1145 ձեռագրում, որն ընդօրինակվել է 1614 թ. Ամիդում⁶ (նկ. 1): Եսային պատկերված է վանականի կնգուղը գլխին, մեծ գահին բազմած, հովվական գավազանը ձախ ձեռքին, աջը դարձած դեղի ծնկած աբեղաները, որոնցից մեկի ձեռքին բացված գալարակ է: Մանրանկարը վերնագրված է «*Բարունադետուն մեր Եսայի*», որ գրված է էջի վերևում: 296 էջին առկա տեղեկության համաձայն՝ *Քերականության մեկնություն*ն ընդօրինակված է Եսայի Նշեցու կազմած բնօրինակից, և շատ հնարավոր է, որ այս պատկերը մույմդես, որի ոճը զգալիորեն տարբերվում է XVII դ. նկարչությունից, կրկնօրինակված լինի բնօրինակից, ինչպես Մշո ձեռագրի մանրանկարի դեղքում:

Պետք է նշել, որ Նշեցու այս մանրանկարները չեն արտահայտում գրող մարդու ավանդական տեսակը, այլ պատկերում են իր աշակերտներին դասավանդող ուսուցչին: Նույն բանաձևն ավելի զարգացված հանդիպում է Երուսաղեմի հայոց պատրիարքարանի Շմբե 365 ձեռագրի սկզբում (նկ. 2, տե՛ս գուն. պատկ. 22)⁷: Մատյանն ընդօրինակված է 1299 թ. Կիլիկիայում և լուսարձակում է Գևորգ Սկևռացու կազմած *Եսայի մարգարեի մեկնությունը*: Այն Նշեցուն է ուղարկել

Կեսարիայի Կոստանդին եղիսկոփոսը, որի մասին տեղեկանում ենք հիշատակարանում գրված Կոստանդինի նամակից, ուր վերջինս նշում է, որ Նշեցուն է ուղարկում խոստացված *Մեկնությունը*, և խնդրում է իրեն հիշել աղոթքներում, առաջ ավելացնում, որ ձեռագիրը կազմված չէ⁸: Այս նամակը, որ թվագրված չէ, վստահաբար գրված է 1309 թ.-ից առաջ, թվական, երբ Կոստանդինն ընտրվեց կաթողիկոս, և 1305 թ.-ից հետո, երբ Կոստանդինը եկել էր Նայաստան: Վերջինիս միջոցով կաթողիկոս Գրիգոր Անագարբացին Եսայի Նշեցուն էր փոխանցել Ներսես Շնորհալու գործերի մի ժողովածու⁹: Նավանաբար հենց այս այցելության ժամանակ էլ Կոստանդինը Եսայի Նշեցուն խոստացել էր ուղարկել *Եսայի մարգարեի մեկնությունը*:

Երուսաղեմի Տճժ 365 գրչագրի համար որդես առաջնաթերթ ծառայող՝ դասավանդող Նշեցու այս տատկերը ձեռագրի բովանդակության հետ որևէ առնչություն չունի: Վստահաբար, այն չի արվել նախքան Գլաձոր ուղարկվելը, քանի որ ոչ միայն տարբեր է XIV դարասկզբի կիլիկյան մանրանկարիչների ոճից, այլև Կոստանդին Կեսարացին էլ չէր մոռանա այն նշել, եթե արած լիներ Նշեցու համար: Ղետկաբար, մանրանկարն ավելացվել է Գլաձորում, երբ գրչագիրը Նշեցու սեփականությունն է դարձել և կազմվել: Էջի վերևի ձախ անկյունում բազմել է Եսային՝ հովվական գավազանը ձեռքին, գլխին հոգևորականի սև վեղարն է, դեղին թիկնոցը՝ կաղույտ տատմունքների վրայից¹⁰: Նամենատելով այս տատկերը XVII դ. Ամիդում արված և վերը մեր նշած մանրանկարի հետ՝ երևում է, թե որքան հարազատ է մնացել հետագա մանրանկարիչը հին օրինակից ընդօրինակելիս՝ ամբողջությամբ տարգեցնելով այն (հմմտ. գուն. տատկ. 22 և նկ. 1, *հավելումը թարգմանչինն Է*):

Երուսաղեմի ձեռագրի մանրանկարում լույսի մի շող է իջնում Եսայու վրա, որ խորհրդանշում է աստվածային ներշնչանքը, իսկ նրա բերանից ելնող գծերի փունջը խորհրդանշում է ձայնը, որով նա ոգեշնչում է իր աշակերտներին: Վերջիններս տատկերված են էջի երկու կողմերում՝ մեկը մյուսի գլխավերևում, շատերի ձեռքերին կիսաբաց գիրք է՝ կարմիր գծերով տղիտակ կերտասի վրա: Ուստառատ բնով մոմենին ձգվում է էջի կենտրոնով, որի փոքրիկ ճյուղին տեղադրված գրակալի վրա դրված է մի գիրք, իսկ գրքի առջև տատկերված է ծնկած մի արեղա՝ հագին դեղին տատմունքան և շագանակագույն թիկնոց: Մի երիտասարդ, որ անկասկած մանրանկարիչն է, աղոթելու դիրքով ծնկել է մանրանկարի ներքևում՝ ձեռքերը վեր տարգած: Մանրանկարի խորագիրը գրված է էջի վերևը երիզող հատվածում. *Բարունադեմուն մեր Եսայի*, որ կրկնված է նաև XVII դ. նկարում:

Այս տեսարանը, որտեղ ուսուցիչը մեկնում է աշակերտի կողմից ընթերցված աստվածաշնչյան ինչ-որ հատված կամ եկեղեցու հայրերից որևէ գրվածք, միևնույն ժամանակ խորհրդանշական է, քանի որ Եսային իր ներշնչանքը ստանում

էր երկնքից: Նոնենին ղատկերում է հավանաբար կենաց ծառը՝ դրախտի կենտրոնում: Այն տարբեր է բարու և չարի իմաստության ծառից, որից Աստված արգելեց ուտել: Օրինակ՝ Թորոս Տարոնացու կողմից 1318 թ. ծաղկված Եսայի Նշեցու Աստվածաշնչում կենտրոնում ղատկերված են Ադամն ու Եվան բարու և չարի ծառի ղոտողը համոտեսելիս, իսկ աջ կողմում կարելի է տեսնել նաև մի նոնենի¹¹:

Իր այս գաղափարով, բայց ոչ ձևով, Եսայի ռաբունադետի մանրանկարը հիշեցնում է *Իմաստության աղբյուրների* բյուզանդական հորինվածքները, ինչդեռ, օրինակ՝ Նովիան Ոսկեբերանի Ճառերից մեկի մանրանկարը, որտեղ մագաղաթը, որի վրա գրված են ճառերը, վերածվում է մի աղբյուրի, որից ըմդելու են գալիս մի քանի եղիսկոդոսներ¹²: Սակայն, չնայած խորհրդանշական մանրամասների առկայությանը՝ հայկական մանրանկարը ղատմական բնույթ ունի. այն ժամանակակից մարդու ղատկեր է և ոչ թե եկեղեցու հայրերից մեկին:

Երուսաղեմի մանրանկարի խիստ ոճն ավելի մոտ է Թորոս սարկավագի ոճին, ով 1311 թ. ծաղկել է Թավրիզի Սուրբ Աստվածածին եկեղեցում ղահվող Ն^ճ 1 Ավետարանը. ընդօրինակման վայրը հիշատակարանում նշված չէ: 1910 թ. հրատարակված Թավրիզի ձեռագրացուցակում Ն. Աճառյանի նշած մանրանկարները և ավետարանիչների ղատկերներն անհայտ հանգամանքներում առանձնացվել են ձեռագրից, որից հետո 18 սյուժետային տեսարաններից միայն տասը, և չորս ավետարանիչներից միայն երեքի ղատկերներն է հնարավոր եղել տարբեր հավաքածուներում գտնվողների հետ նույնականացնել¹³: Այս նկարներում երևում են անձերի նույն ղատկերատիպերը՝ ընդգծված դեմքերով և սևածիր աչքերով, ինչդեռ, օրինակ՝ «Տիրամոր նինջը» տեսարանում ղատկերված առաքյալները, որոնք խմբավորված են աջ կողմում՝ մեկը մյուսի գլխավերևում, իսկ նրանցից մեկը ղահում է մի գիրք՝ ճիշտ այն ձևով, ինչդեռ Նշեցու աշակերտները¹⁴: Ծնկած ընթերցողը, որի ղատմունձանը, ծնկներից տարածվելով, գծում է եռանկյունի, նմանվում է Աբրահամի ղատկերին՝ «Չոհաբերության» տեսարանում (նկ. 3 [2]) կամ «Բարեխոսության» (*Ղեխխի*) տեսարանի հրեշտակներին¹⁵: Ծառն ունի Աբրահամի գոհաբերության տեսարանի ծառին նման կորություն և տերևների մի փունջ՝ ճյուղերի սկզբներին: Վերջապես, ստորին լուսանցքում ծնկած ղատա-նին հիշեցնում է Թավրիզի ձեռագրում ղատկերված Թորոս սարկավագին¹⁶:

Թորոս սարկավագին այս մանրանկարի վերագրումը, որ առաջարկված է նաև Բ. Նարկիսի կողմից¹⁷, ավելի մեծ հետաքրքրություն ունի, քան սոսկ ծաղկողի նույնականացումը: Այն մեզ ցույց է տալիս, որ Թորոս սարկավագը Գլաճորի գրչության կենտրոնի անդամ է եղել, այնդեռ, ինչդեռ իր անվանակից Թորոս Տարոնացին, քանի որ վստահաբար հենց այնտեղ է արվել դասավանդող Նշեցու ղատկերը և աղա կցվել Կոստանդին Կեսարացու ուղարկած ձեռագրին: Կարելի է աղա Գլաճորին վերագրել նաև Թավրիզի Ավետարանը, որի գրչության վայրը

նշված չէ հիշատակարանում, և որի տատվիրատու Օերը նույնդես հայտնի չէ:

Թորոս Տարոնացին իր հերթին ևս տատկերել է Նշեցու դիմանկարներ, սակայն ոչ որդես ուսուցչի. ամեն դեպքում տատկերագրական հորինվածքները կրկին տարբեր են տատվիրատուների համար ընդունված ձևերից: 1318 թ. Նշեցու համար ծաղկված Աստվածաշնչում (ՄՄ, Շճ 206) նա տատկերված է նստած դիրքով, համաբարբառային խորաններից մեկի զարդարված ուղղանկյան կողքին. աջ կողմ թեքված՝ ձախ ձեռքին տահում է մի գիրք, իսկ աջ ձեռքը տարզել է դեղի Աստծո օրհնող Աջը, որ դուրս է եկել երկնքի կաղույտից (նկ. 4, տե՛ս գուն. տատկ. 23): Այս դիրքը դիմանկարի համար խիստ հազվադեղ է, բայց ոչ՝ բացառիկ. բավական է հիշել 1211 թ. Նադբատի Ավետարանի խորաններում տատկերված կերտարները¹⁸: Այստեղ ուշագրավն այն է, որ Եսային կրում է ոչ թե վարդադետների հանդերձ, ինչդես նախորդ տատկերներում, այլ՝ առաքյալների, ավելին, նա լուսատասկով է: Դիմացի էջի հանդիտակաց հատվածում գետնին նստած է մի տատանի՝ ձեռքին մագաղաթե մեծ թերթ, որ կտցում է դեղի ներքև թռչող մի սիրամարզ: Պատանին, անկասկած, տատրաստվում է տատկերել Նշեցուն (նկ. 5 [3]): Սակայն նա, հանձին որի կարելի է ճանաչել Թորոս Տարոնացուն, ում տատկերը նման է Վենետիկի Մխիթարյանների գրադարանի Շճ 1917 Ավետարանի դիմանկարին¹⁹, մեջքով է նստած Նշեցուն: Արդյոք կարելի՞ է եմթադրել, որ այս երկու տատկերները առանձնացված են մի մանրանկարից, որտեղ վերջիններս եղել են դեմ-դիմաց և լավ չեն հարմարվել խորանների նկարագարդմանը: Նամանման մի հորինվածք վկայված է Կիլիկիայում՝ ավելի ուշ ծաղկված մի ձեռագրում. Մատենադարանի Շճ 2627 Աստվածաշնչում ծաղկող Սարգիս Պիծակը տատկերված է նստած դիրքով՝ ծնկներին մի տախտակ: Աչքերը հառած իր առջև բազմած Նակոբ կաթողիկոսին՝ նա տատրաստվում է նկարել վերջինին դիմանկարը²⁰:

Թորոս Տարոնացու կողմից արված Եսայի Նշեցու երկրորդ տատկերը գտնվում է 1323 թ. մի Ավետարանում, որ տահվում է Մատենադարանում (ՄՄ, Շճ 6289): Տիրամայրը, Մանուկը գրկին, զարդարում է Մատթեոսի, Դուկասի և Նովհաննու ավետարանների ճակատային հատվածը: Դուկասի ավետարանի համադատասխան մասում Տիրամայրը մագաղաթյա մի թերթ է ուղղել Եսայի Նշեցուն, որ հաստատվում է վերջինի գլխավերևում արված գրությամբ, մինչդեռ Նիսուս նույնից ուղղել է աջ կողմում կանգնած մեկ այլ մարդու, ով, նույն գրության համաձայն, Ներսես վարդադետն է (նկ. 6, տե՛ս գուն. տատկ. 24): Անկասկած, վերջինս Ներսես Մշեցին է, որի հիշատակին Եսային ընդօրինակել էր տվել այդ նույն ձեռագիրը, ինչդես գրված է հիշատակարանում²¹: Այստիսով, այս մանրանկարում նրանք միավորված են, ինչդես և իրենց կյանքի ընթացքում. Ներսեսը՝ որդես Գլաձորի հիմնադիր, Եսային՝ որդես նրան հաջորդող:

Ինչդեռ տեսնում ենք, Նշեցու բոլոր դատկերները տարբեր են դատվիրատուների կամ մատենագիրների համար ընդունված ձևերից: Շեշտն ամեն անգամ դրված է ներշնչված կամ աստվածային ձեռքով երկնքից օրհնություն ստացող ուսուցչի վրա, կամ թղթի, որ դեղի իրեն է տարգում Տիրամայրը: Առաջին անգամ աստվածային ներգործության նշանը, որ առավելադեպ հատուկ էր ավետարանիչներին, եկեղեցու հայրերին կամ մի դատվելի սրբի, կիրառված է ժամանակակից մի գործչի համար: Չնայած իրենց տարգությանը՝ այս տարբեր դատկերները Գլաձորի ծաղկողների յուրատիպ գործերի մեջ են դասվում:

Դասավանդող ուսուցչի դատկերը Նշեցու աշակերտների և այլ հայտնի հեղինակների մոտ տարբեր կերպ է արտահայտվել՝ կիրառվելով երբեմն այնպիսի ձեռագրերի զարդարման համար, որոնք տարածվում են ոչ թե տվյալ հեղինակների, այլ ուրիշների գործերը: Այսպես, 1334 թ. Երզնկայում ընդօրինակված՝ Պողոս առաքյալի *Թղթերի*՝ Ղովհան Ոսկեբերանի թարգմանության սկզբում Եսայի Նշեցու աշակերտ Կիրակոս Երզնկացին ներկայացված է իր աշակերտներով շրջադասված²²: Ավելի հետաքրքիր են Գրիգոր Տաթևացու մանրանկարները, ով 1390-1410 թթ. ղեկավարել է Ղովհաննես Որոտնեցու հիմնադրած Տաթևի վանական դպրոցը Սյունիքում: Առաջնային մասում նստած է Գրիգորը՝ երկու ձեռքերը հենած իր գավազանին, մինչդեռ իր աշակերտները նստած են գետնին՝ իր կողքին. նրանցից մեկը տախում է կիսաբաց մի գիրք, մյուսներն իրար հետ ինչ-որ բան են քննարկում կամ նայում են իրենց ուսուցչին²³: Էջի վերնամասը զարդարում են երեք մեդալիոն, որոնք տատկերված են խորքում երևացող կառույցների գլխավերևում. «Տիրամայրը Մանկան հետ» տեսարանը զբաղեցնում է կենտրոնական մեդալիոնը, իսկ երկու կողքերի մեդալիոններին տատկերված են սրբադասակյալ Դավիթը՝ ձեռքին մի գիրք, և օրհնող Ղովհաննես Մկրտիչը, երկուսն էլ տատկերված կիսով չափ: Մագաղաթի վրա արված այս մանրանկարը գտնվում է 1449 թ. Կաֆայում (Դրիմ) ընդօրինակված թղթե մի ձեռագրում, որ տախում է Մատենադարանում (ՄՄ, Ն⁶⁰ 1203): Շատ հնարավոր է, ինչդեռ արդեն տեսանք²⁴, որ այս մանրանկարը, որի ունը տարբեր է նույն շրջանի Դրիմի գործիչների ունից, սերում է Տաթևում ընդօրինակված մեկ այլ ձեռագրից և արված է նույնիսկ Գրիգոր Տաթևացու կենդանության օրոք: Ինչդեռ դասավանդող Եսայի Նշեցու դատկերը, Գրիգոր Տաթևացունը նույնպես կրկնված է ավելի ուշ շրջանի ձեռագրերում, որոնց մեջ և XVII դ. թվագրվող Երուսաղեմի Ն⁶⁰ 1291 ժողովածուն, ուր կարելի է գտնել միևնույն մանրանկարը՝ միայն առանց վերին հատվածի երեք մեդալիոնների²⁵:

Դատելով նշված գործերից՝ կարելի է ասել, որ Գրիգոր Տաթևացու դիմանկարների դեղքում չի եղել տատկերագրական նույն բազմազանությունը, ինչ Եսայի Նշեցու դարագայում: Չնայած իրենց տարգությանը՝ դրանք դասվում են Գլաձորի մանրանկարիչների հետաքրքիր ստեղծագործությունների շարքին:


- 1 S. Der Nersessian, *L'art arménien*, Paris, 1977, p. 129 և մկ. 90:
- 2 Գ. Յովսեփեան, *Խաղբակեանք կան Պոռնեանք հայոց Պատմութեան մէջ*, Ամթիլիաս, 1969, էջ 251-296: Լ. Գ. Խաչերյան, *Գլաճորի համալսարանը հայ մանկավարժական մտքի մէջ (XIII-XIV դդ.)*, Եր., 1978:
- 3 Ա.Ն. Ավետիսյան, *Հայկական մանրանկարչության Գլաճորի դպրոցը*, Եր., 1971:
- 4 Ա.Ա. Մուրատեան, Ն.Պ. Մարտիրոսեան, *Ցուցակ ձեռագրաց Սշոյ Ս. Սոաքելոց-Թարգմանչաց վանքի եւ շրջակայից*, Խմբագրեց Ա. Գալայճեան, Երուսաղէմ, 1967, էջ 17:
- 5 Նշվ. աշխ., էջ 17, հիշ. Բ:
- 6 Ն. Պողարեան, *Սայր ցուցակ հայերէն ձեռագրաց Սրբոց Յակոբյանց*, հտ. 4, Երուսաղէմ, 1969, էջ 232-3:
- 7 Հոդվածում մշվող 2, 4 և 6 (համադաստախմբաբար՝ գում. դատկ. 22, 23, 24) մանրանկարների բնօրինակները մեզ սիրով տրամադրեց Մատենադարանի արվեստի ժառանգության և գրչության կենտրոնների բաժնի վարիչ Կ. Սաթևոսյանը, որի համար մեր շնորհակալությունն ենք հայտնում նրան: Սյուս մանրանկարները արտատրված են ֆրանսերեն հոդվածից (ծանոթ. թարգմ.):
- 8 Ն. Պողարեան, մշվ. աշխ., հտ. 2, Երուսաղէմ, 1967, էջ 269-271:
- 9 Ձեռագիր մշումն ավելացված է գրչագրի մէջ անձամբ կաթողիկոսի կողմից, ՍՍ, Հմր 500: Լ. Խաչիկյան, *ԺԴ դարի հայերէն ձեռագրերի հիշատակարաններ*, Եր., 1950, էջ 35:
- 10 Նկարը գումավոր հրատարակված է *Armenian Art Treasures of Jerusalem*, ed. by B. Narkiss with collaboration M. E. Stone, Oxford, 1979, fig. 92:
- 11 Der Nersessian, *L'art arménien*, fig. 169:
- 12 T. Velmans, «L'iconographie de la "Fontaine de Vie" dans la tradition byzantine à la fin du Moyen Age», *Synthronon*, Paris, 1968, p. 121, et fig. 2.
- 13 Զ. Աճառեան, *Ցուցակ ձեռագրաց Թարիզի*, Վիեննա, 1910, էջեր 70-74: Պարզված մանրանկարների համար տե՛ս, S. Der Nersessian, *The Chester Beatty Library, A Catalogue of the Armenian Manuscripts*, Dublin, 1958, vol. I, pp. XXX-XXXII; S. Der Nersessian, *L'art arménien*, p. 224, և H. Kurdian «An Armenian Miniature of the XIVth century», *The Princeton University Library Chronicle*, IV (1943), pp. 109-112.
- 14 S. Der Nersessian, *The Chester Beatty Library*, pp. 31-2.
- 15 Նշվ. աշխ., հտ. II, առաջնամկար:
- 16 Տե՛ս, F. Macler, *Documents d'art arméniens*, Paris, 1924, Album, figs. 253, 254, 256.
- 17 *Armenian Art Treasures of Jerusalem*, p. 77.
- 18 S. Der Nersessian, *L'art arménien*, fig. 164.
- 19 S. Der Nersessian, *Manuscripts arméniens illustrés des XIIe, XIIIe et XIVe siècles de la Bibliothèque des Pères Mekhitharistes de Venise*, Paris, 1937, Album, pl. LIV, fig. 119.
- 20 Վ. Ղազարյան, *Սարգիս Պիծակ*, Եր., 1980, տախտակ IV:
- 21 Լ. Խաչիկյան, *ԺԴ դարի հիշատակարաններ*, էջ 182:
- 22 Գ. Յովսեփեան, *Խաղբակեանք*, էջեր 268-9, ծնթ. 2:
- 23 A. Dournovo et R. G. Drampian, *Miniatures arméniennes*, Erévan, 1967, pl. 69.
- 24 Լ. Խաչիկյան, *ԺԵ դարի հայերէն ձեռագրերի հիշատակարաններ*, մաս I (1401-1450), Եր., 1955, էջ 642: Խաչիկյանը ծանոթագրության մէջ մշում է, որ մոյմ մանրանկարը կրկնված է մաև Մատենադարանի այլ ձեռագրերում, սակայն չի մշում համարները:
- 25 Ն. Պողարեան, մշվ. աշխ., հտ. IV, էջ 499, մկ. 27:



1. Դամավանող Եսայի Նշեցին; Երուսաղեմ, ԴՊՐ 365, 2Բ



3 [2]. Աբրահամի զոհաբերությունը, Ֆլորենցիա, Ի Տատտի, Բերնարդո Բերենսոնի հավաքածու, 1311 թ. Ավետարանից մի թերթ



5 [3]. Թորոս Տարոնացի, Մատենադարան, Գր. 206, 438ա

